ՀԻՄԱ ՏՈ՛ՒՐ ԻՆՁ ԱՅՆ ԼԵՌԸ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀԵՍՈՒ 14:6-13

*6 Հուդայի որդիները Գաղգաղայում մոտեցան Հեսուին, և կենեզացի Հեփոնեի որդի Քաղեբը
նրան ասաց. Դու գիտես այն խոսքը, որ Տերը Կադես-Բառնեայում ասաց Աստծու մարդ
Մովսեսին իմ և քո մասին: 7 Ես քառասուն տարեկան էի, երբ Տիրոջ ծառա Մովսեսն ինձ
Կադես-Բառնեայից ուղարկեց երկիրը հետախուզելու, և ես նրան սրտիս մեջ եղածի պես
անկեղծ լուր բերեցի: 8 Սակայն ինձ հետ վեր գնացող իմ եղբայրները ժողովրդի սիրտը
թուլացրին, բայց ես ամբողջովին հետևեցի իմ Տեր Աստծուն: 9 Այն օրը Մովսեսը երդում
արեց՝ ասելով. Այն երկիրը, ուր քո ոտքը կոխել է, հավիտյան քոնը և քո որդիներինը թող լինի
իբրև ժառանգություն, որովհետև դու ամբողջովին հետևեցիր իմ Տեր Աստծուն: 10 Արդ, ահա
Տերն ինձ ողջ է պահել, ինչպես որ ասել էր. քառասունհինգ տարիներին այն ժամանակից ի
վեր, որ Տերն այս խոսքն ասաց Մովսեսին, երբ Իսրայելի որդիները թափառում էին
անապատում: Եվ ահա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ: 11 Այսօր ես տակավին ուժեղ
եմ, ինչպես որ էի այն օրը, երբ Մովսեսն ինձ ուղարկեց: Այն ժամանակվա ուժս ինչպես որ էր,
այժմ էլ այնպես է թե՛ պատերազմելու և թե՛ դուրս գալու և մտնելու համար: 12* ***Հիմա տո՛ւր
ինձ այն լեռը,*** *որի մասին Տերը խոսեց այն օրը, որովհետև դու այն օրը լսեցիր, որ այնտեղ
կան ենակիմներ և մեծ ու պարսպապատ քաղաքներ. գուցե Տերն ինձ հետ լինի, և ես
կհալածեմ նրանց, ինչպես որ Տերն ասել է: 13 Եվ Հեսուն օրհնեց նրան ու Քեբրոնը
Հեփոնեի որդի Քաղեբին տվեց իբրև ժառանգություն:*

Ի՞նչ կարող ենք սովորել Քաղեբի մասին:

- ***Աստվածաշնչում Քաղեբը հիշատակվում է 36 անգամ:***
- ***Նա Եգիպտոսում ծնված վերջին եբրայեցին էր, և նա ստրկությունից բարձրացավ և դարձավ Քանանի խոշոր հողատեր:***
- ***Ես չեմ կարող գտնել սուրբ գրություններում մեկ դեպք, որտեղ Քաղեբը հիշատակված լինի որպես բացասական մարդ:***
- ***Մովսեսը Իսրայելի տասներկու ցեղերից յուրաքանչյուրից առաջնորդ ուղարկեց Քանան՝ երկիրը լրտեսելու համար: Քաղեբը երիտասարդ չէր: Նա քառասուն տարեկան էր, երբ ընտրվեց Ավետյաց երկիր մտնելու իր տասնմեկ եղբայր առաջնորդների հետ:***

*Թվ. 13:27-29 - 28 Եւ պատմեցին նորան եւ ասեցին. Մեզ ուղարկած երկիրդ գնացինք. Եւ
իրաւ որ կաթ ու մեղր է բղխում նա, եւ նորա պտուղը սա է: 29 Միայն թէ այն երկրի մէջ
բնակուող ժողովուրդը զօրաւոր է, եւ քաղաքները պարսպաւոր եւ խիստ մեծ են. Նաեւ
այնտեղ Ենակի որդկանցը տեսանք:*

Թվ. 13:31-32 - 31 Եւ Քաղէբը լռեցրեց ժողովրդին Մովսէսի առաջին, եւ ասեց. Աղէ՝ ելնենք, եւ ժառանգենք այն, որովհետեւ մենք անպատճառ կարող ենք նորան տիրել: 32 Բայց նորա հետ ելնող մարդիկն ասեցին. Մենք չենք կարող այն ժողովրդի վերայ ելնել, որովհետեւ նորանք մեզանից զօրաւոր են:

Հիմա տո՛ւր ինձ այն լեռը

Աբրահամը հայտնի էր իր հավատքով և հնազանդությամբ:

Հովսեփը հայտնի էր իր երազներով:

Մովսեսը հայտնի էր իր հեզությամբ:

Դավիթը հայտնի էր որպես մարդ՝ Աստծո սրտի պես:

Քաղեբը հայտնի էր... Հիմա տո՛ւր ինձ այն լեռը

1. ՔԱՂԵԲԻ ՄԵՋ ՈՒՐԻՇ ՀՈԳԻ ԿԱՐ.

Թվոց 14:24 – Բայց որովհետև իմ ծառա Քաղեբի մեջ ուրիշ հոգի կար...

- ***Ուրիշ Հոգի նշանակում է դրական հայացք ունենալ ձեր անցյալի փորձառությունների նկատմամբ:***

  *8 Սակայն ինձ հետ վեր գնացող **իմ եղբայրները** ժողովրդի սիրտը թուլացրին, բայց ես ամբողջովին հետևեցի իմ Տեր Աստծուն:*

2. ՔԱՂԵԲԻ ՄԵՋ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՈԳԻ ԿԱՐ:

- ***Քաղեբ անունը Եբրայերեն նշանակում է «շուն»:***
- ***Մարտական ոգին չի սահմանափակվում տարիքով.***

  Ես քառասուն տարեկան էի... ...Եվ ահա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ:

- ***Պարզապես հիշիր, որ քո կյանքի երկրորդ փուլում պայքարում ես քո, ընտանիքի և թոռների համար...***

  11 Այսօր ես տակավին ուժեղ եմ, ինչպես որ էի այն օրը, երբ Մովսեսն ինձ ուղարկեց: Այն ժամանակվա ուժս ինչպես որ էր, այժմ էլ այնպես է թե՛ պատերազմելու և թե՛ դուրս գալու և մտնելու համար:

  *12 **Հիմա տո՛ւր ինձ այն լեռը,** որի մասին Տերը խոսեց այն օրը, որովհետև դու այն օրը լսեցիր, որ այնտեղ կան ենակիմներ և մեծ ու պարսպապատ քաղաքներ. գուցե Տերն ինձ հետ լինի, և ես կհալածեմ նրանց, ինչպես որ Տերն ասել է: 13 Եվ Հեսուն օրհնեց նրան ու Քեբրոնը Հեփոնեի որդի Քաղեբին տվեց իբրև ժառանգություն:*

3. ՀԻՄԱ ԺԱՄԱՆԱԿՆ Է ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ ՁԵՐ ԼԵՌԸ:

- ***Ո՞րն է այն լեռը, որին բախվում եք: Իսկ ո՞րն է Ձեր պատասխանը:***

  Հռոմեացիս 8:31 – Արդ ի՞նչ ասենք այս բաների մասին. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ:

  Մատթեոս 17:20 – Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք և այս սարին ասեք՝ "Այստեղից այնտե՛ղ փոխադրվիր", այն կփոխադրվի: Եվ ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ